

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/3

17 մարտի 2015 թ.

Քննարկվեց «Փրիթի Ուեյ» ՍՊԸ 05.03.2015 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 12.02.2015 թ-ի թիվ 5100871 ակտի դեմ:

«Փրիթի Ուեյ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ ԽՀՎ ՀՏ պետի 02 փետրվարի 2015թ. թիվ 5100871 հանձնարարագրի համաձայն «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ում իրականացվել է ՀԴՄ-ի կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքներով կազմվել է թիվ 5100871 ակտը, որով արձանագրվել է բյուջե վճարման ենթակա տուգանք 150.000 դրամի չափով:

«Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն հանդիսանալով խոշոր հարկ վճարող, ՀՀ կառավարության 26.06.2014 թ-ի թիվ 646-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ 2014 թ-ի նոյեմբերի 1-ից պետք է ապահովեր ՀԴՄ կտրոնի վրա իրացված ապրանքի կամ մատուցված ծառայության անվան տպագրումը, ինչը տեղի է ունեցել սկսած 17.11.2014 թ-ից, այսինքն՝ 17 օր ուշացումով: Դրա պատճառը ոչ թե «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի անհետևողականությունը կամ որոշումից տեղյակ չլինելն էր, այլ իրականում որոշման պահանջը կատարելու համար համապատասխան մեխանիզմների ու գործիքների անկատարությունն ու բացակայությունը: «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն չուներ նաև այլընտրանքային տարբերակ, քանի որ ՀՀ-ում ՀԴՄ-ների ծրագրային ապահովումը իրականացվում է միայն հարկային մարմնի կողմից, որը չէր համապատասխանում ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշման պահանջներ կատարելուն: Իրականում հարկային մարմնի կողմից ծրագրային ապահովումը չէր համապատասխանում իրավանդորդով պահանջվող չափանիշներին: Ընկերությունը ստիպված է եղել կատարել ժամանակատար գործողություններ, լրացուցիչ ծախսեր մանրաձախ վաճառքը ՀԴՄ-ով ձևակերպելու համար: Եղել են հաճախորդների դժգոհություններ, որոնք ստիպված են եղել երկար սպասել համապատասխան գործարքը ձևակերպելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի «ՀԴՄ-ներ» բաժնի «ՀԴՄ-ի ապրանքների ցանկեր» էջում ապրանքացանկը ֆայլով ներբեռնելը, նույնիսկ ձեռքով մուտքագրելը, եղել է անհնարին: Ընկերությունը փորձել է ապրանքացանկը ձեռքով մուտքագրել համակարգ, սակայն մեկ անվանում ապրանք մուտքագրելուց հետո էջը փակվում էր ու գալիս սկզբնական վիճակին: Արդյունքում մի քանի օրվա անընդհատ փորձերի արդյունքում հնարավոր է եղել մի քանի հազար անվանում ապրանքից մուտքագրել ընդամենը մի քանի անվանում ապրանք: Այդ առթիվ ընկերությունը դիմել է նաև ՀԴՄ-ների տեխնիկական սպասարկման գրասենյակ («Տամա էլեկտրոն» ՍՊԸ), սակայն նշված գրասենյակի աշխատակիցը նույնպես մուտքագրված մի քանի անվանումները չի կարողացել ներբեռնել ՀԴՄ ասելով, որ խնդիրը համակարգային է: Այս ամենի

մասին բազմիցս հայտնվել է թեժ գիծ ու ստացվել է պատասխան, որ խնդրի լուծման ուղղությամբ աշխատանքներ են տարվում:

ՀՀ տարածքում համապատասխան տեխնիկական միջոցը (USB to RJ45 adapter) բացակայել է: Չնայած «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն ՀՀ և ԱՄԷ տարածքներում գործող ընկերություններից նախապես փորձել է ձեռք բերել տվյալ կապուղին, սակայն փորձերն ապարդյուն են անցել: Արդյունքում 30.10.2014թ. նամակով ընկերությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալին՝ բարձրացնելով տվյալ որոշման հետ կապված մի քանի հարցեր (այդ թվում նաև USB to RJ45 adapter-ի բացակայության հարցը), խնդրելով ուղղորդել և տալ պարզաբանումներ բարձրացված հարցերի լուծման վերաբերյալ, սակայն մինչ օրս որևէ պատասխան չի ստացվել:

Ի վերջո միայն 17.11.2014թ-ին է ընկերությունը կարողացել կատարել 26.06.2014թ. թիվ 646-Ն որոշման պահանջը, քանի որ USB to RJ45 adapter-ը ձեռք է բերվել 16.11.2014թ.:

Ելնելով վերոգրյալից և խնդրի կարևորությունից, ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել թիվ 5100871 ակտը, քանի որ որոշման պահանջները նշված ժամկետում չկատարելու հետ կապված ընկերությունը թերացում կամ մեղք չունի:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02.02.2015 թ-ի թիվ 5100871 հանձնարարագրի համաձայն «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 10.06.2014 թ-ից մինչև 12.02.2015 թ-ն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 12.02.2015 թ-ի թիվ 5100871 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ստուգվող ժամանակաշրջանում ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման թիվ 1 հավելվածի «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջների» 13-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերի պահանջները (ՀԴՄ կտրոնի վրա բացակայում էին ապրանքի անվանումը, գնված ապրանքի քանակը և դրա չափման միավորը), որը նույն որոշման թիվ 2 հավելվածի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում (ընկերության 2013 թ-ի իրացումից հասույթը գերազանցել է 500.0 մլն դրամը):

Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 01.08.2013 թ. թիվ 846-Ն որոշմամբ հաստատված Հավելված թիվ 1-ի 13-րդ կետի 9-րդ և 10-րդ

ենթակետերի համաձայն. «13. ՀԴՄ-ի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները)՝

...

9) ապրանքի (ծառայության) անվանումը.

10) գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը.»:

Իր հերթին, ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված Հավելված թիվ 2-ի 40-րդ կետի 1-ին ենթակետերի համաձայն. «Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում՝

1) որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա որևէ տեղեկատվության (տվյալի) բացակայությունը (բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի) կամ անընթեռնելիությունը (անզեն ասքով կտրոնի վրա արտացոլված տվյալներն ընթերցելու անհնարինությունը).»:

Քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք արձանագրել են, որ ստուգվող ժամանակաշրջանում ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված Հավելված թիվ 1-ի 13-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերի պահանջները, այն է՝ ընկերության կողմից տրված ՀԴՄ կտրոնի վրա բացակայել են ապրանքի անվանումը, գնված ապրանքի քանակը և դրա չափման միավորը: Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 12.02.2015 թ-ի թիվ 5100871 ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ